ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 թվականի N 1674-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով կառուցապատման թույլտվությունների էլեկտրոնային միասնական համակարգի՝ urban.e-gov.am կայքի միջոցով ներկայացված հայտը, աշխատանքային նախագիծը՝ ***որոշում եմ.***

1. Տրամադրել շինարարության թույլտվություն և թույլատրել կատարելու համայնք Ալավերդի գյուղ Մղարթ 9-րդ փողոց 2 հողամաս հասցեում գտնվող, «Ալավերդի արևային կայան» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով պատկանող 0.96221 հա մակերեսով հողամասում արևային ֆոտովոլտային կայանի կառուցման (միացնել 630 կՎԱ հզորության 10/04 կՎ լարման ենթակայանին, ենթակայանը միացնել «Ծաթեր» 35/10 կՎ ե/կ-ից սնվող Մղարթ 10կՎտ լարման օդային գծի մոտակա խարսխային հենարանին) շինարարական աշխատանքներ:
2. Շինարարական աշխատանքներն սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շինարարության թույլտվության առկայության դեպքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. նոյեմբերի 07
ք. Ալավերդի